

Մոսկվայի և Պետերբուրգի ազգային նարոդնիկական խմբակները 19-րդ դարի 80-ական թվականների երկրորդ կեսին

Դանիելյան Մկրտիչ Դ.

պ.գ.թ., ավագ գիտաշխատող ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/009-002-9914-9839>

mdanielyan@mail.ru

Դանիելյան Լուսինե Մ.

*ՀՀ ԳԱԱ, Զաղարական կառավարում մասնագիտացում
մագիստրատուրայի II կուրսի ուսանողուհի (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0009-0009-6151-0163>

lusine.danielian@mail.ru

ՀՏԳ 94(47):94(479.25); EDN: IDBWVO;

DOI: 10.58587/18292437-2024.5-64

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ ազգային նարոդնիկություն, խմբակներ, կազմակերպություններ, Պետրովսկի Ակադեմիա, Ալեքսանդր Աբելյանց, Հովհանես Զաջազնունի, Գրիգորի Արեշև

Национально-народнические группы Москвы и Петербурга во второй половине 80-х годов XIX века

Даниелян Мкртич Д.

кандидат исторических наук, старший научный сотрудник,

Институт истории НАН РА (Ереван, РА)

Даниелян Лусине М.

студентка II курса магистратуры по специализации «Политический менеджмент»

НАН РА (Ереван, РА)

Аннотация. Во второй половине 80-х годов XIX века в армянской действительности сформировались национально-народнические группы, основой деятельности которых стала идеология русских революционных народников (популистов). В то же время, под влиянием объективных причин, они стали уделять больше внимания национальным проблемам, пытаясь применить идеологию народников к национальным проблемам.

В данной статье наибольшее внимание уделено освещению деятельности армянских национально-народнических групп Москвы и Санкт-Петербурга. Члены этих групп активно сотрудничали с русскими революционерами народниками, полагая, что в конечном итоге у них общие цели. Позже члены этих групп вошли в состав Армянской революционной федеративной партии.

Ключевые слова и словосочетания: Народники, группы, организации, Петровская академия, Александр Абелянц, Ованес Каджазнуни, Григорий Арешев

The National Narodnik groups of Moscow and Petersburg in the second half of the 80s of the 19th century

Danielyan Mkrtych D.

Candidate of Historical Sciences, Senior Researcher Institute of History NAS RA (Yerevan, RA)

Danielyan Lusine M.

Political Management specialization, the second year of a Master's student NAS RA (Yerevan, RA)

Abstract. In the second half of the 80th year of the 19th century, National Narodnik groups were formed in the Armenian reality for which the basis of activity became the ideology of Russian Revolutionary Narodniks (populist). At the same time, under the influence of objective reasons, they began to pay more attention to national problems trying to apply Narodnik ideologies to national problems.

In this article, the greatest attention is focused on the presentation of the activities of Armenian National Narodnik groups of the cities of Moscow and St. Petersburg. The members of these groups actively collaborated with the Russian Revolutionary Narodniks believing that ultimately they had common goals. Later, the members of the groups became members of the Armenian Revolutionary Federation Party.

Keywords & phrases: Narodniks, groups, organizations, the Academy of Petrovsky, Alexander Abelyants, Hovhanes Kajaznuni, Grigory Areshev

19-րդ դարի 80-ական թվականներին արևելահայ իրականության մեջ ձևավորվեցին ազգային նարոդնիկական կազմակերպություններ և խմբակներ, որոնք նոր երևույթ էին հասարակական-քաղաքական կյանքում: Ազգային նարոդնիկական կազմակերպությունների ի հայտ գալը պայմանավորված էր որոշակի օրեկտիվ գործունեությամբ: Ամենից առաջ դրանց մեջ կարևոր էր ռուսական հեղափոխական նարոդնիկության ճգնաժամը Ալեքսանդր II-ի դեմ 1881 թ. մարտի մեկյան մահափորձից հետո: Ռուսական նարոդնիկության ազդեցության տակ գտնվող հայկական խմբակները և կազմակերպությունները նման իրավիճակում դեմքով շրջվեցին դեպի հայ իրականություն և սկսեցին ավելի մեծ ուշդրություն դարձնել նրա հիմնախնդիրներին: Մյուս կարևոր գործոնը Բեռլինի կոնգրեսում Հայկական հարցը միջազգային դիվանագիտական քննարկումների առարկա դառնալն էր, որ ստիպեց տարբեր կողմնորոշում ունեցող հոսանքներին և կազմակերպություններին իրենց ուշադրությունը բևեռել Արևմտյան Հայաստանի վրա: Արդյունքում հայ իրականության մեջ ձևավորվեցին ազգային նարոդնիկական խմբակներ և կազմակերպություններ, որոնց համար գործունեության գաղափարախոսական հիմքը դարձավ հեղափոխական նարոդնիկականության և ազգային հիմնահարցերի միավորումը:

Մենք առավելապես անդրադառնալու ենք այնպիսի ազգային նարոդնիկական խմբակների և կազմակերպությունների գործունեությանը, որոնց մասին գիտական գրականությունը կամ արխիվային վավերագրերը սակավ տեղեկություններ են հաղորդում: Եթե «Հայրենասերների Միության» կամ Թիֆլիսում գործող խմբակների և կազմակերպությունների մասին համեմատաբար ավելի շատ տեղեկություններ կան, ապա 1880-ական թվականների երկրորդ կեսերին գործող համանամա խմբակների և կազմակերպությունների գործունեության մասին տվյալները շատ քիչ են և մենք աշխատել ենք որոշ չափով լրացնել այդ բացը:

Այսպես արխիվային վավերագրերը տեղեկություններ են հաղորդում զուտ հայկական կազմ ունեցող մի խմբակի մասին, որը գործել է Պետերբուրգում: Նրա հիմնադիր ժողովը տեղի է ունեցել 1884 թ. նոյեմբերի 2-ին Հայկ Աթոռնյանի բնակարանում [2, թ. 13]: Այս խմբակի մեջ մտնում էին Ալեքսանդր Նազարյանը, Ալեքսանդր Աբեյանը,¹ Հայկ Աթոռնյանը, Աբել Ապրեսյանը, Ալեքսանդր Սաֆարյանը, Ջհանգիր Չաղմողեյանը, Սմբատ Սարգիս Բեգյանը, Սևոս Ամերյանը, Արշակ Կալափարյանը և Լևոն Գասպարյանը [2, թ. 13]:

¹ Ալեքսանդր Աբեյանը ««Հայրենասերների Միության հիմնադիրներից և հետագայում Հ.Յ. Դաշնակցության հայտնի գործիչներից Ներսես Աբեյանի եղբայրն էր:

Շատ հավանական է, որ խմբակը գտնվել է հեղափոխական նարոդնիկության գաղափարախոսության ազդեցության տակ, սակայն նրա ազգային կազմը հուշում է այն մասին, որ նրանք զբաղվել են նաև ազգային հիմնախնդիրներով: Մյուս կողմից այս խմբակի կազմում Ալեքսանդր Աբեյանի անդամակցությունը հուշում է այն մասին, որ այն, հավանական է եղել է «Հայրենասերների Միության» պետերբուրգյան մասնաճյուղը: Բանն այն է, որ այս ժամանակաշրջանում «Հայրենասերների Միությունը» ակտիվ քայլեր ձեռնարկում հիմնելու իր մասնաճյուղերը Ռուսական կայսրության հայաշատ բնակավայրերում և ակնարկներ կան այն մասին, որ հենց այս ժամանակ մասնաճյուղ հիմնվեց նաև Պետերբուրգում: Ուշագրավ է, որ հիմնադիր ժողովի ընդունված փաստաթղթում շեշտվում էր, որ կազմակերպության անդամ կարող են դառնալ այն անձնավորությունները, որոնք իրենց ստորագրությունը կդնեն այդ փաստաթղթի տակ [2, թ. 13]: Որևէ այլ տեղեկություններ այս խմբակի գործունեության մասին արխիվային վավերագրերում բացակայում են:

Մոսկվայում և Պետերբուրգում 1880-ական թվականների երկրորդ կեսերին գործել են այլ ազգային նարոդնիկական խմբակներ և կազմակերպություններ, որոնց կազմի և գործունեության մասին տեղեկանում ենք առավելապես արխիվային վավերագրերից: Այսպես 1888 թ. հոկտեմբերի 18-ին Ոստիկանական Դեպարտամենտը դիմում է Պետերբուրգի քաղաքագլխին խնդրելով վերջինիս թույլտվությունը ճշտելու Պետերբուրգում գործող հայկական խմբակի կազմը և գործունեությունը [3, թ. 3]: Բանն այն է, որ Դեպարտամենտը տեղեկություններ էր ստացել այն մասին, որ Պետերբուրգում ռուսանող հայ երիտասարդության շրջանում հիմնվել է խմբակ, որն ուներ իր գանձարկը: Այդ խմբակի ձևավորման գործում մեծ դեր է ունեցել Տեխնոլոգիական ինստիտուտի միասնիկական բաժնի III կուրսի ռուսանող Գրիգորի Իվանի Արեշևը,² որը իրականացրել է նաև կապը կապը Մոսկվայի և Կովկասի համանման հայկական կազմակերպությունների հետ: Ըստ ոստիկանության տեղեկությունների Արեշևը արձակուրդներին մեկնել է Բաքու, աշխատելով Կաչնովի գրասենյակում: Նրա հանձնարարությամբ Պետերբուրգից Կովկաս է մեկնել նաև Քաղաքացիական ինժեներների ինստիտուտի ոսանող Տեր-Հովհանիսյանց Քաջագունին,³ որը պետք է զբաղվեր հայ արքեպիսկոպոս Խրիմյանի⁴ ֆոտոլուսանկարների

² Գրիգորի Արեշևը ակտիվորեն մասնակցել է ռուսանողական և հեղափոխական շարժումներին

³ Խոսքը գնում է հետագայում Հայաստանի առաջին հանրապետության վարչապետ Հովհանես Քաջագունու մասին:

⁴ Խոսքը գնում է Մկրտիչ Խրիմյանի մասին:

վաճառքով [3, թ. 3]: Ուշագրավ է, որ Ոստիկանական Դեպարտամենտը հատուկ հարցումով դիմում է ԹԻՖլիսի նահանգային ժանդարմական վարչության պետին, խնդրելով մանրամասն տեղեկություններ հաղորդել Խրիմյանի մասին: Վերջինս տեղեկացնում է, որ Խրիմյանը թուրքահպատակ հայ է և մեծ հեղինակություն է վայելում մտավորականության և սովորող երիտասարդության շրջանում: Նա եղել է Վանի նահանգի եպիսկոպոսը, այնուհետև Կոստանտինոպոլիսի Հայոց Պատրիարքը և ներկայումս որևէ պաշտոն չի զբաղեցնում և թուրքական կառավարությունից նպատե ստանում: ԹԻՖլիսի նահանգային վարչության պետը շեշտում էր այն փաստը, որ արքեպիսկոպոս Խրիմյանի պրոկառավարական ուղղվածության մասին հնարավոր չէ պատկերացում կազմել, քանի որ նա միշտ բնակվել է և բնակվում է Ռուսական կայսրության սահմաններից դուրս [3, թ. 13]:

Ժանդարմերիան կարողանում է պարզել, որ Պետերբուրգի հայկական խմբակի մեջ բացի Արեշյանից և Քաջազնունուց, մտնում են նաև Քաղաքացիական ինստիտուտի ուսանող Խոսրով Ավետիկի Միրզոյանցը և Անտառային ինստիտուտի ուսանողներ Պետրոս Հարությունի Չաքարյանցն ու Հակոբ Մարգարի Հարությունյանցը [3, թ. 3]:

Այնուհետև Պետերբուրգի քաղաքագուխը տեղեկացնում է Ոստիկանական Դեպարտամենտին, որ գործակալների միջոցով ստացված տեղեկությունների համաձայն Անտառային ինստիտուտի հայազգի ուսանողների շրջանում ստեղծվել է մի խումբ, որի մեջ մտնում էին Անտառային ինստիտուտի ուսանողներ Դույյանցը, Ռոտինյանցը, Չաքարյանցը, Ստեփանյանցը, Թաթոսյանցը, Շահումյանցը, Յուզբաշևը և Անանը, որը ազատվել է իր դիմումի համաձայն: Խումբը ուներ իր գանձարկը, որը ձևավորվել էր բացառապես հայ ուսանողների միջոցներով և վերահսկվում էր Դույյանցի կողմից: Վերջինս զբաղվելով ազգային հարցերով, այդ դրամական միջոցներով, բաժանորդագրվում էր հայկական ամսագրերին, ձեռք էր բերում հայ պոետների ֆոտոլուսանկարները և այլ նմանօրինակ նյութեր: Ոստիկանական Դեպարտամենտին ուղղված գրության մեջ շեշտվում էր այն փաստը, որ այս խմբի որևէ անդամի վերաբերյալ հեղափոխական բնույթի գործունեության մասին որևէ տեղեկություններ չեն ստացվել և խմբի անդամներից որևէ մեկը չի ունեցել շփումներ քաղաքականապես անբարեհույս անձնավորություններ հետ [3, թ. 8]: Այնուհանդերձ գրության մեջ, կապված այլ հայազգի ուսանողների մասնակցությանը այս խմբի գործունեության հետ, հիշատակվում է այն փաստը, որ 1886 թ. ուսումնական տարվանը, Չաքարյանցի փողոցում գտնվող Տեխնոլո-

գիական ինստիտուտի ուսանող Արեշյանի տանը տեղի է ունեցել նրա ընկերների հավաքույթը, որում քննարկել են կարիքավոր ուսանողներից մեկին աջակցություն ցույց տալու հարցը և և ծաղկեպսակի համար դրամական միջոցների հավաքումը, որը պետք է ուղարկվեր կովկասյան ոմն գրական գործչի հուղարկավորության համար: Ըստ գործակալների հաղորդած տեղեկությունների, այդ հավաքում հեղափոխական բնույթի հարցեր չեն քննարկվել [3, թ. 8]:

Այս գրությունը վկայում է, որ Ոստիկանական Դեպարտամենտը սկզբնական շրջանում ոչ լիարժեք տեղեկություններ է ունեցել այս խմբակի գործունեության մասին, այն դիտելով որպես բացառապես ազգային հայրենասիրական հարցերով զբաղվող մարմին: Մակայն այն փաստը, որ նրանք, սերտ կապեր ունենալով հայրենիքի հետ, աշխատում էին զբաղվել զուտ ազգային հարցերով, խստորեն պահպանելով գաղտնապահության սկզբունքները այնպես, որ ոստիկանությունը չէր տեսնում այս փաստացի կազմակերպության վերածված խմբի գործունեության հեղափոխական բնույթը և կապերը հեղափոխական նարողնիկության հետ, վկայում էր այն մասին, որ խումբը իր գործունեությունը շատ ավել շուտ էր սկսել: Մի փոքր ավելի ուշ Ոստիկանական Դեպարտամենտը կարողանում է ավելի մանրամասն տեղեկություններ ձեռք բերել այս խմբի մեջ մտնող անդամների մասին և ավելի հստակ պատկերացում ունենալ խմբի գործունեության բնույթի մասին:

Այսպես, հետաքննության արդյունքում Պետերբուրգի ժանդարմական վարչությունը կարողանում է ավելի մանրամասն տեղեկություններ ստանալ խմբի անդամների մասին: Այս հետաքննության արդյունքում պարզվում է, որ խմբի մեջ մտել են ոչ միայն Անտառային ինստիտուտի, այլև Քաղաքացիական ինժեներների ինստիտուտի հայազգի ուսանողները: Այսպես Անտառային ինստիտուտի ուսանողներից մտնում էին⁵

№ 5 Արշակ Մելիքի Թաթոսյանց, 21 տարեկան, առևտրականի զավակ, սովորել է ԹԻՖլիսի ռեալական ուսումնարանում, ինստիտուտ է ընդունվել 1884 թ. բնակվում է ինստիտուտի շենքում:

№ 6 Միմոն Հակոբի Շահումյանց, 23 տարեկան, կովկասյան վերաբնակչի զավակ, սովորել է Բաքվի ռեալական ուսումնարանում, ինստիտուտում էր գտնվում 1884 թ. սկսած, բնակվում էր ինստիտուտի շենքում, իսկ այս տարվա հունիսի 13-ին մեկնել է Շուշի քաղաք:

№ 7 Կարապետ Աղաջանի Յուզբաշև, 20 տարեկան, առևտրականի զավակ, սովորել է

⁵ Փաստաթղթի մեջ խմբի անդամների թվարկումը սկսվում է № 5-ից:

Թիֆլիսի ռեալական ուսումնարանում, ինստիտուտում է գտնվում 1887 թ., այս տարվա հունիսի 17-ից արձակուրդի մեջ է, մեկնել է Ալեքսանդրապոլ քաղաք:

№ 8 Արգար Ալեքսանդրի Անանով, 25 տարեկան, տոհմական պատվավոր քաղաքացու զավակ, սովորել է Վլադիկավկազի ռեալական ուսումնարանում, ինստիտուտ է ընդունվել 1886 թ., իսկ այս ընթացիկ տարում ազատվել է իր դիմումի համաձայն, բնակվում է Անգլիական պողոտայի № 18 տանը:

№ 9 Հակոբ Մարգարի Իսաչատուրյանց, 20 տարեկան, Շուշիի գավառի բնակիչ, սերում է հարկատու խավից, սկզբնական կրթությունը ստացել է Շուշիի ռեալական ուսումնարանում, բնակվում է Անտառային ինստիտուտի շենքում:

№ 10 Տեխնոլոգիական ինստիտուտի ուսանող Գրիգոր Իվանի Արեշև, 23 տարեկան, կոլեգիական ռեգիստրատորի զավակ, սովորել է Ստավրապոլի ռեալական գիմնազիայում, բնակվում է Չարայկայան պողոտայի № 33 տան № 4 բնակարանում:

№ 11 Քաղաքացիական ինժեներների ինստիտուտի ուսանող Հովհաննես Մաթևոսի Տեր-Հովհանիսյանց Քաջազունի, 27 տարեկան, հոգևորականի զավակ, սովորել է Թիֆլիսի ռեալական ուսումնարանում, բնակվել է Պողոսյան փողոցի № 15 տան № 18 բնակարանում, իսկ այս տարվա մայիսի 20-ին մեկնել է Թիֆլիս:

№ 12 Քաղաքացիական ինժեներների ինստիտուտի ուսանող Իսոսրով Ավետիքի Միրզոյանց, 23 տարեկան, Ալեքսանդրապոլ քաղաքի բնակիչ, սկզբնական կրթությունը ստացել է Թիֆլիսի ռեալական ուսումնարանում, բնակվում է Կլինսկի պողոտայի № 21 տանը: [3, թթ. 9-10]

Չեռք բերելով այս տեղեկությունները Ոստիկանական Դեպարտամենտ, Պետերբուրգի և Մոսկվայի ժանդարմական վարչությունները շարունակում են հետաքննությունը, որի արդյունքում նրանք կարողանում են բացահայտել այլ հայկական ազգային նարողնիկական բնույթ ունեցող խմբակների գործունեությունը: Այսպես. Մոսկվայի օբեր-պոլիցմեյստերի 1888 թ. սեպտեմբերի 26-ի Ոստիկանական Դեպարտամենտին ուղղված գրության մեջ նշվում է, որ Մոսկվայում իրոք գործում են երկու հայկական խմբակներ, որոնցից առաջինի մեջ, ըստ ժանդարմերի հայտնի տվյալների, մտնում են Մոսկվայի համալսարանի ուսանողները, այն է՝ բժշկական ֆակուլտետի III կիսամյակի ուսանող Վաշնաձեն, իրավաբանական ֆակուլտետի V կիսամյակի ուսանող Իսաչատուրովը, բանասիրական ֆակուլտետի VII կիսամյակի ուսանող Կախառյանին և իրավաբանական ֆակուլտետի I կիսամյակի ուսանող Իոսանիսյանը [3, թ. 11]:

Երկրորդ խմբակի մեջ մտնում էին Պետրովսկի հողագործական և անտառային Ակադեմիայի ուսանողները, որոնցից ժանդարմերի հայտնի էին Չավարովը,⁶ Շահնազարովը, Տեր-Ստեփանովը, կուրսերը ավարտած Գյուզալովը և խոհանոցի սեփականատեր (ոչ ուսանող) Զվամելը [3, թթ. 9-10]:

Ժանդարմերի կարողանում է պարզել, որ այս երկու խմբակները սերտորեն համագործակցում են իրար հետ, ունեն նույն հեղափոխական ծրագրերը և նրանց միջև կապող օղակ են հանդիսանում Ոստիկանական Դեպարտամենտին արդեն հայտնի գործիչներ Կուրտանովսկայան, Լոնակինը, Չոլոտովը և Կրանսիսֆելդը [3, թ. 10]:

Մի կողմից այս խմբակների կազմը հուշում է նրանց ազգային բնույթի մասին: Մյուս կողմից նրանց համագործակցությունը ռուս հեղափոխական նարողնիկ գործիչների հետ վկայում էր, որ նրանց վրա դեռևս զգալի էր նարողնիկության ազդեցությունը: Դրանով հավանաբար պետք է բացատրել նաև այն, որ առաջին խմբակի մեջ մտնում էին նաև ազգությամբ վրացի ուսանողներ:

Որպես առավել ակտիվ անդամների, ժանդարմերի փաստաթղթերում հիշատակվում են առաջին հերթին Գյուզալովը և Չավարովը: Հատկապես նրանք էին նախաձեռնում տարբեր հավաքույթների և երեկույթների կազմակերպումը քաղաքական արտոյալներին աջակցելու և անհրաժեշտ միջոցներ հանգանակելու նպատակով: Գյուզալովը, սերտ հարաբերություններ ունենալով Պետրովսկի Ակադեմիայի ուսանողների հետ, ուներ մասնավոր ուսանողական գրադարան, որտեղ, ի թիվս այլ գրքերի, առկա էր նաև անլեզավ գրականություն: Ակտիվ ուսանողների թվում հիշատակվում են նաև Տեր-Ստեփանովը և Շահնազարովը, որոնք շատ սերտ հարաբերություններ ունեին Պետրովսկի Ակադեմիայի նախկին ուսանող Սախնովսկու և Ակադեմիայից վտարված ուսանողներ Շկոպսկու և Սուխանովի հետ [3, թ. 10]: Այս վերջին փաստերը մեկ անգամ ևս հաստատում էին, որ հայ ազգային նարողնիկները շարունակում էին սերտորեն համագործակցել ռուս հեղափոխական նարողնիկների հետ:

Այնուհետև Ոստիկանական Դեպարտամենտի և Մոսկվայի օբեր-պոլիցմեյստերի համաձայնությամբ և միմիայանց հետ համագործակցելով զադունի հսկողություն է սահմանում այս խմբակների մեջ մտնող անդամների նկատմամբ, ձգտելով ավելի մանրամասն տեղեկությունների ձեռք բերել խմբակների մեջ մտնող անդամների ունեցած կապերի կամ իրեն անհայտ այլ անդամների մասին [3, թ. 10]: Արդեն 1889 թ. սեպտեմ-

⁶ Խոսքը գնում է Միմոն Չավարյանի մասին:

բերի 13-ի գրությամբ Մոսկվայի օբեր-պոլիցմեյստերը տեղեկացնում է Ռստիկանանան Դեպարտամենտին այն մասին, որ բացահայտվել են հայկական խմբակի մեջ մտնող այլ անդամներ: Նրանց մեջ էին մտնում, Պետրովսկի Ակադեմիայի ուսանողներ Ստեփան Շահվերդյանը, Գաբրել Դանիել-Բեկովը, Միխայիլ Վերմիշևը, Պավել Մելիքովը, Սերգեյ Մելիք-Սարգիստովը, Նիկոլայ Իսարովը, Գավրիլ Սարգբեդաձեն, նույն Ակադեմիայի ունկնդիր Վարդիս Տեր Օհանեսովը, և անտառապահ Դմիտրի Լևանով Տուլսևը: Այս խմբակի մեջ չեն ընդունվում Մարիա Կուրտանովսկայան, իսկ Իսարովը և Կվալսևը վաճառում էին տոմսակներ քաղաքական արքայալների օգտին և տարածում էին անլեգալ գրականություն, որը նրանք ստանում էին Կոմունստովսկայայից [3, թ. 14]:

Ըստ ժանդարմերիայի ունեցած տեղեկությունների, խմբակի գլխավոր խնդիրը կայանում էր ընդլայնել գանձարկղի շրջանառությունը կարիքավոր ուսանողներին և քաղաքատարկյալներին աջակցելու նպատակով: Դրա համար կազմակերպվում էին երեկույթներ, որոնցից ստացվում էր զգալի թվով դրամական միջոցներ և հիմնական նվիրատուները հանդիսանում էին Մոսկվայի հայ վաճառականները: Այսպես, միայն դեկտեմբերի սկզբներին կազմակերպված երեկույթի ժամանակ նվիրաբերվել էր 3900 ռուբլի և այդ երեկույթին ներկա են եղել Մարիա Կուրտանովսկայան և նրա բարեկամուհիները Կազանի տոհմական պատվավոր քաղաքացու դուստրերը՝ ուսուցչուհիներ Ալեքսանդրա և Վերա Դմիտրևա Մալաշկինները [3, թ. 14]:

Ընդհանուր առմամբ խմբակը տարեկան կազմակերպում էր 10 երեկույթներ, ընդ որում Մարդբեդաձեն միշտ հանդիսանում էր այդ երեկույթների գլխավոր կազմակերպիչը և ղեկավարը, իսկ նրան այդ գործում մեծ աջակցություն էր ցույց տալիս ազնվականուհի Եվգենիա Էդուարդովա Պարիցը [3, թ. 14]:

Այլ տեղեկություններ Մոսկվայի և Պետերբուրգի խմբակների գործունեության մասին մեզ հայտնի արխիվային վավերագրերը չեն հաղորդում: Սակայն այդ բացը լրացնում են թե ժամանակակիցների հուշերը և թե առանձին հետազոտողների ուսումնասիրությունները: Այսպես սփյուռքահայ հեղինակներից Գ. Ղազարյանը, հենվելով այլ աղբյուրների վրա, կարողացել է հետաքրքիր մանրամասներ ներկայացնել այս խմբակների գործունեությունից: Նա իրավացիորեն նշում է, որ Պետրոգրադի ուսանողները ավելի ազգային քաղաքական ուղղություն ունեին, քան Մոսկվայինը: Նրանք հետաքրքրվում էին հայ ժողովրդի ցավերով և Հայաստանի պատմությամբ: Բալկանյան ազգերի ապստամբության և ազատագրական կյանքի վերաբերյալ նրանք գրքույկներ հրատարակեցին.

Այդ միջոցով նրանք պրոպագանդա էին մղում հայկական շրջաններում՝ անցնել Հայաստան և թեթևացնել իրենց ազգակիցների դառնագին վիճակը [6, էջ 18]:

Ղազարյանի այս տեղեկությունը իր հաստատումն է գտնում նաև արխիվային վավերագրում: Պետերբուրգի ուսանողությունը հրատարակեց այնպիսի գրքույկներ, ինչպիսիք են «Դոնչոն-բուդար ավազակապետի պատմությունը», «Ժաննա դը Արկ. Գաղղիայի ազատությունը», «Բուդար ավազակապետը». «Ուրիշի գերեզմանի վրա առանց արտասուքի են լաց լինում» և այլ գրքույկներ, որոնցում գովերգվում էր Բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը և այն դիտվում էր որպես խրախուսիչ օրինակ հայ երիտասարդության համար [1, թթ. 3, 5, 15-50]:

Մոսկվայի հայ ուսանողությունը իր գործելակերպով թեպետ տարբերվում էր, սակայն նրանք նույնպես հետաքրքրվում էին հայ լեզվով, հայ պատմությամբ, գրականությամբ, բայց բնավ չէին զբաղվում Թուրքահայ խնդրով [6, էջ 17]:

Այս կապակցությամբ ուշագրավ է Քր. Միքայելյանի հայ ուսանողությանը տրված բնութագրին, որում հստակ առանձնանում են նրանց մեջ առկա երկու ուղղությունները: Ըստ էության երկու ուղղություններն էլ ավելի շեշտված կերպով էին հակվում դեպի ազգային արժեքները և այդ ուղղություններից մեկը «...առանց բնառ դադարելու հետաքրքրուել հարագատ ժողովրդի կեանքով ու գրականությամբ ձգտում էր որքան հնար է շատ գիտելիքներ ձեռք բերել հասարակագիտությանից, որպեսզի կեանք մրնի ըստ կարելիույն զինուած իր ժողովրդի դրություներ գնահատելու և նորա ախտերի դեմ նպատակահարմար միջոցներ գտնելու համար: Իսկ միւս հատուածը՝ մեզ «կօսմօպօխտ» (աշխարհաքաղաքացի) անունն մկրտելով չէր ուզում ոչինչ գիտենալ, բացի հայերեն լեզուի, հայոց պատմությունան, աշխարհագրությունան և գրականությունան ուսումնասիրությունից, որի համար, իր հերթին, «շովինիստների» կուսակցություն անունն էր ստացել մեր կողմից», - վկայում է Քր. Միքայելյանը [4, էջեր 59-60]: Այսպես կոչված «կոսմոպոլիտների» աչքի ընկնող ներկայացուցիչներից Միքայելյանը հիշատակում է Միմոն Չավարյանին, Ստեփան Շահվերդյանին, Հովհաննես Սադաթյանին, Սամվել Հաթյանին: Իսկ «շովինիստների» առավել հայտնի դեմքերից Միքայելյանը նշում է Լևոն Սարգսյանին, Արշակ Բարխուդարյանին, Լևոն Սանուելյանին և ուրիշներին [4, էջեր 59-60]:

Գ. Ղազարյանը նույնպես հաստատում է, որ մասնավորապես Մոսկվայի ճեմարանի 15-16 հայ ուսանողներ զբաղվում էին քաղաքական ընդհանուր գործունեությամբ և հարած էին ընդհանուր ռուսական հեղափոխության: Այս

խմբի մեջ Ղազարյանը նույնպես նշում է Ս, Չավարյանին, Ստ. Շահվերդյանին, ինչպես նաև Արմեն Շահնազարյանին, Հարություն Փիլարյանին, Մարտին Շաթիրյանին և ուրիշների [6, էջ 17]: «Կոսմոպոլիտները գտնում էին, որ միայն բացառապես հայկական հողի վրա իրականացվող գործունեությունը կարող է կործանարար լինել, քանի որ անջատվել Ռուսաստանի հեղափոխական մեծ շարժումից, նշանակում է շեղվել հեղափոխական ճանապարհից և կորստյան մատնվել, ոչնչանալ» [5, էջ 29]:

Պետրոգրադի ուսանողության նախաձեռնությամբ Մոսկվայում տեղի ունեցավ հայ ուսանողության համագումարը: Պետերբուրգի հայ ուսանողության ներկայացուցիչները՝ Արշակ Պարոնյանը, Ստեփան Թադիանոսյանը, Թադևոս Չաքարյանը և Կոնստանտին Խատիսյանը հանդես էին գալիս անմիջապես պայքար սկսելու առաջարկով, իսկ Մոսկվայի այսպես կոչված «երկրականների» խումբը գտնում էր, որ նախ պետք է ուսումնասիրել Երկիրը և հետո միայն գործի անցնել [7, էջ 132]:

Համագումարը, այս տարբեր մոտեցումների հետ կապված, Արևմտյան Հայաստանի և Հայկական հարցի վերաբերյալ ընդհանուր հայտարարի չեկավ: Սակայն այն որոշակի ազդեցություն ունեցավ «կոսմոպոլիտների» վրա և մասնավորապես Մոսկվայի Պետրովսկի Ակադեմիայի ուսանողները՝ Ռոստոմը, Վարդգես Քաջագունին, Մարտին Շաթիրյանը և մյուսները սկսում են քննել իրենց ուշադրությունը արևմտահայության խնդիրների վրա և դրանով նրանք թեքվում են դեպի ազգային-ազատագրական շարժման կողմը՝ համալրելով «շովինիստների» շարքերը: 1890 թ. սկզբներին, ըստ Ղազարյանի կարծիքի, «Մոսկվայի համագումարին մասնակցող ուսանողներից մի մասի բուն ցանկությունը՝ ուսումնասիրել երկիրը, գոհացում է գտնում Թիֆլիսի «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության կողմից, և Թուրքահայաստան են ուղարկվում Մ. Մարգարյանը և Յ. Արշակյանը, որոնց միանում է նաև Արշ. Բարխուդարյանը (նաև Մ. Ղազարյան, Ռուբեն կեղծանունով մեկը, որ ենթադրվում է ուսուցիչ Բախչեանը, հայտնի մանկավարժ), Ա. Մանվելյան, Երվանդը (Չաքարյան), Արշակը և ուրիշներ» [6, էջ 18]: Մոսկվայի ուսանողության ջանքերով էր, որ Արևմտյան Հայաստան մեկնեց Լ. Սարգսյանը: Վերադառնալով

այնտեղից, Լ. Սարգսյանը «Մուրճ» ամսագրում հրատարակեց «Այց Թուրքահայաստանին» գիրքը, որը մեծ տպավորություն թողեց ժամանակակիցների վրա և սրեց հայ երիտասարդության հետաքրքրությունը «ավետյաց երկրի» նկատմամբ [6, էջ 18; 8, էջ 46]:

1889 թ. վերջերին և 1890 թ. սկզբներին Պետրոգրադից և Մոսկվայից Թիֆլիս են վերադառնում կրթությունն ավարտած հայ ուսանողները և նրանք, ովքեր ուսանողական և հեղափոխական շարժումներին մասնակցելու կամ քաղաքական անաբարեհուսության պատճառով հեռացվել էին ուսումնական հաստատություններից: Արդյունքում Թիֆլիսում տեղի է ունենում ուժեր նոր համախմբում և հայրենիք վերադարձած հայ ուսանողները ակտիվորեն մասնակցում են «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության գործունեությանը, իսկ մի փոքր ավելի ուշ Հ. Յ. Դաշնակցություն կուսակցության հիմնադրմանը և աշխատանքներին:

Օգտագործված սկզբաղբյուրների և գրականության ցանկ

1. Ռուսաստանի Պատմության Պետական արխիվ [այսուհետև ՌՊՊԱ], ֆ. 77, ց. 4, գ. 45:
2. ՌՊՊԱ, ֆ. 1410, ց. 2, գ. 229:
3. Ռուսաստանի Դաշնության Պատմության Արխիվ [այսուհետև ՌԴՊԱ], ֆ. 102, 3-դ գործավարություն, ց1888թ., գ. 297:
4. **Միքաէլեան Քրիստափոր**, Բեկորներ իմ հուշերից // «Հայրենիք» ամսագիր: - Բոստոն, 1924, № 10:
5. Մ. Ե.-ի յուշերը [Մարտին Շաթիրյան], Հայոց հասարակական շարժումների պատմությունից, գրի առավ **Ն. Հանգոյց** // «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1923, № 5:
6. **Ղազարյան Գ.**, Ինչպես ծնունդ առավ Դաշնակցությունը // «Հայրենիք» ամսագիր: - Բոստոն, 1925, № 1:
7. **Խուդինյան Գ.**, Հ Յ Դաշնակցության քննական պատմություն ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը: - Եր., 2005:
8. Հ.Յ. Դաշնակցության վատսունամյակ: - Բոստոն, 1950:

Сдана/Հանձնվել է՝ 04.10.2024
Рецензирована/Գրախոսվել է՝ 12.10.2024
Принята/Ընդունվել է՝ 18.10.2024